# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**« 22 » հոկտեմբերի 2021թ. №55-Ա**

### ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

**համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Լոռի Բերդ համայնքի ավագանու 2021թ. հոկտեմբերի 22-ի նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ավետիսյան Արմեն Սիլվեստրի | | | |
| Խալաթյան Ավետիք Հարությունի | | | |
| Ջատինյան Կարեն Հրաչիկի | | | |
| Չիբուխչյան Արման Հրաչիկի | | | |
| Պապյան Հարություն Միշիկի | | | |
| Վարդանյան Մելանյա Գեորգիի | | | |

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ.

**2021թ. հոկտեմբերի 22**

**գ. Լոռի Բերդ**

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու
2021թ. հոկտեմբերի 22-ի №55-Ա որոշման

# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

**1)** Լոռի Բերդ համայնքի ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 22-ի նիստի օրակարգի հաստատում:

**2)**Լոռի Բերդ համայնքի 2021թ. բյուջեի երրորդ եռամսյակի կատար-
ման մասին Լոռի Բերդ համայնքի ղեկավարի հաղորդումը ի գիտություն ընդունելու մասին:

**3)** Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի 100 տարեկան բնակչին՝ «Տարեցների միջազգային օրվա» կապակցությամբ դրամական աջակցություն ցուցաբերելու մասին:

**4)** Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի վարչական տարածքում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակության փոփոխման և Լոռի Բերդ համայնքի ավագանու 23.09.2021 թվականի թիվ 53-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

**5)** Լոռի Բերդ համայնքի Ուռուտ գյուղի վարչական տարածքում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին:

**6)**Լոռի Բերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի գործառնական նշանակությունը փոփոխելու, համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

**7)** Մեկ անձից գնման մասին:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 22 » հոկտեմբերի 2021թ. №56-Ն

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2021թ. ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով՝

**համայնքի ավագանին որոշում է.**

Ընդունել ի գիտություն Լոռի Բերդ համայնքի 2021թ. բյուջեի երրորդ եռասյակի կատարման մասին Լոռի Բերդ համայնքի ղեկավարի հաղորդումը:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ավետիսյան Արմեն Սիլվեստրի | [signature] | | |
| Խալաթյան Ավետիք Հարությունի | [signature] | | |
| Զատինյան Կարեն Հրաչիկի | [signature] | | |
| Չիբուխչյան Արման Հրաչիկի | [signature] | | |
| Պապյան Հարություն Միշիկի | [signature] | | |
| Վարդանյան Մելանյա Գեորգիի | [signature] | | |

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.

**2021թ. հոկտեմբերի 22**

**գ. Լոռի Բերդ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**« 22 » հոկտեմբերի 2021թ. №57-Ա**

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 100 ՏԱՐԵԿԱՆ ԲՆԱԿՉԻՆ «ՏԱՐԵՑՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ» ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով և Լոռի Բերդ համայնքի ավագանու 14.04.2020թ. թիվ 14-Ա որոշմամբ, ինչպես նաև հաշվի առնելով Լոռի Բերդ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Լոռու մարզպետի 30.09.2021 թվականի թիվ 01/106.4.1/07858-2021 գրության վերաբերյալ.

**համայնքի ավագանին որոշում է.**

**1.** Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի բնակչուհի՝ Սանամ Ասատուրի Վերմիշյանին «Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ» Լոռի Բերդ համայնքի 2021 թվականի բյուջեի «Սոցիալական հատուկ արտոնություններ» ծրագրի 10 բաժնի 07 խմբի 01 դասի 4729 հոդվածով նախատեսված գումարից տրամադրել 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ դրամական աջակցություն:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ավետիսյան Արմեն Սիլվեստրի | [signature] | | |
| Խալաթյան Ավետիք Հարությունի | [signature] | | |
| Զատինյան Կարեն Հրաչիկի | [signature] | | |
| Զիբուխչյան Արման Հրաչիկի | [signature] | | |
| Պապյան Հարություն Միշիկի | [signature] | | |
| Վարդանյան Մելանյա Գեորգիի | [signature] | | |

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** [signature] **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ.

**2021թ. հոկտեմբերի 22**

**գ. Լոռի Բերդ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 22 » հոկտեմբերի 2021թ. №58-Ա

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 23.09.2021Թ. ԹԻՎ 53-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետով, 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Լոռի Բերդ համայնքի ավագանին.

**համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող 06-009-0122 կադաստրային ծածկագրից առանձնացված 2.400 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխադրել բնակավայրի նպատակային նշանակության, խառը կառուցապատման գործառնական նշանակության:

2. Համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխության առաջարկության վերաբերյալ կազմված հողաշինական գործը ներկայացնել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քննարկմանը:

2. Ուժը կորցրած ճանաչել Լոռի Բերդ համայնքի ավագանու 23.09.2021 թվականի թիվ 53-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ավետիսյան Արմեն Սիլվեստրի | | | |
| Խալաթյան Ավետիք Հարությունի | | | |
| Զատինյան Կարեն Հրաչիկի | | | |
| Ջիբուխչյան Արման Հրաչիկի | | | |
| Պապյան Հարություն Միշիկի | | | |
| Վարդանյան Մելանյա Գեորգիի | | | |

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**« 22 » հոկտեմբերի 2021թ. №59-Ա**

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՌՈՒՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ կետերով, ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշմամբ սահմանված կարգով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Լոռի Բերդ համայնքի ավագանին.

**համայնքի ավագանին որոշում է.**

**1.** ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ուռուտ գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ Անահիտ Սերգեյի Մանուկյանի սեփականություն հանդիսացող 06-105-0027-0016 կադաստրային ծածկագրով 0.13624 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ավետիսյան Արմեն Սիլվեստրի | [signature] | | |
| Խալաթյան Ավետիք Հարությունի | [signature] | | |
| Չատինյան Կարեն Հրաչիկի | [signature] | | |
| Չիբուխչյան Արման Հրաչիկի | [signature] | | |
| Պապյան Հարություն Միշիկի | [signature] | | |
| Վարդանյան Մելանյա Գեորգիի | [signature] | | |

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ.

**2021թ. հոկտեմբերի 22**

**գ. Լոռի Բերդ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**« 22 » հոկտեմբերի 2021թ. №60-Ա**

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ, 29-րդ և 42-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ, 59-րդ և 67-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին՝

**համայնքի ավագանին որոշում է.**

**1.** Տալ հավանություն համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերն աճուրդ-վաճառքով օտարելուն Լոռի Բերդ համայնքի բյուջեի նկատմամբ պարտքեր չունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց: Չափագրման, վկայականների ձեռքբերման և նոտարական վավերացման ծախսերը փոխհատուցվելու են աճուրդում հաղթող ճանաչված անձի կողմից:

**1.1.** Տալ հավանություն Լոռի Բերդ համայնքի Սվերդլով բնակավայրում գտնվող 06-101-0045-0005 ծածկագրով 0.09388 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակությամբ հողամասը գործառնական նշանակությունը գյուղ. արտադրական օբյեկտների 100.000 ՀՀ դրամ մեկնարկային գնով աճուրդ-վաճառքով օտարելու առաջարկությանը:

**1.2.** Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրում գտնվող 06-009-0023-0001 ծածկագրից առանձնացված 0.0902 հա մակերեսով՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակությամբ հողամասի մեկնարկային գինը սահմանել՝ 220.000 ՀՀ դրամ, իսկ հողամասի վրա գտնվող 451 ք/մ արտաքին մակերեսով կիսաքանդ պահեստը գնահատել 2.650.000 ՀՀ դրամ և տալ հավանություն ընդհանուր 2.870.000 դրամ մեկնարկային գնով աճուրդ-վաճառքով օտարելու առաջարկությանը:

**1.3.** Տալ հավանություն Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրում գտնվող 06-009-0121-0002 ծածկագրով 0.1952 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության երրորդ կարգի վարելահողը ճանաչել համայնքային սեփականություն և 230.000 ՀՀ դրամ մեկնարկային գնով աճուրդ-վաճառքով օտարելու առաջարկությանը:

**1.4.** Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ բնակավայրում գտնվող 06-044-0018-0001 ծածկագրից առանձնացված 0.17987 հա մակերեսով հասարակական կառուցապատման հողամասի մեկնարկային գինը սահմանել՝ 400.000 ՀՀ դրամ, իսկ հողամասի վրա գտնվող 911.1 ք/մ արտաքին մակերեսով կիսաքանդ մշակույթի տան շենքը գնահատել 10.120.000 ՀՀ դրամ և տալ հավանություն ընդհանուր 10.520.000 ՀՀ դրամ մեկնարկային գնով աճուրդ-վաճառքով օտարելու առաջարկությանը:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| **Համայնքի ավագանու անդամներ** | **Կողմ** | **Դեմ** | **Ձեռնպահ** |
|---|---|---|---|
| Ավետիսյան Արմեն Սիլվեստրի | | | |
| Խալաթյան Ավետիք Հարությունի | | | |
| Զատինյան Կարեն Հրաչիկի | | | |
| Զիբուխչյան Արման Հրաչիկի | | | |
| Պապյան Հարություն Միշիկի | | | |
| Վարդանյան Մելանյա Գեորգիի | | | |

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ.

**2021թ. հոկտեմբերի 22**

**գ. Լոռի Բերդ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**« 22 » հոկտեմբերի 2021թ. №61-Ա**

**ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18–րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետի, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 23-րդ մասի 5-րդ կետի «գ» ենթակետի պահանջներով և հաշվիառնելով այն հանգամանքը, որ Լեջանի գյուղի մանկապարտեզի շենքի վերանորոգման աշխատանքներիը արդեն սկսվել են, իսկ դրանց տեխնիկական հսկողության աշխատանքների մրցույթը երկու անգամ չկայացած է համարվում հայտեր չլինելու պատճառով.

**համայնքի ավագանին որոշում է.**

**1.** Գնման հրատապության հիմքով պայմանավորված՝ Լեջան գյուղի մանկապարտեզի վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության աշխատանքների գնումը կատարել մեկ անձից գնման ընթացակարգով:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ավետիսյան Արմեն Սիլվեստրի | | | |
| Խալաթյան Ավետիք Հարությունի | | | |
| Զատինյան Կարեն Հրաչիկի | | | |
| Զիբուխչյան Արման Հրաչիկի | | | |
| Պապյան Հարություն Միշիկի | | | |
| Վարդանյան Մելանյա Գեորգիի | | | |

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ.
**2021թ. հոկտեմբերի 22**
**գ. Լոռի Բերդ**